ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2011թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. 2011թ. ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի գործունեության կարեւորագույն արդ-
   յունքներից կարելի է առանձնացնել հետեւյալը.

ա) Անցկացվել են Անին հայոց Բագրատունյաց մայրաքաղաք հռչակման 1050-ամյակին նվիրված գիտական ընթերցումներ Անիի Մայր տաճարում:

բ) Հրատարակվել է կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի 13-րդ հատորը (194 էջ) եւ պատրաստվել է հրատարակման ժողովածուի 14-րդ հատորը՝ 12.5 տպ. մամուլ ծավալով:

գ) Տպագրվել են ավ. գիտաշխատող Ա. Հայրապետյանի կազմած «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (19-րդ դ. – 20-րդ դ. սկիզբ)» փաստաթղթերի եւ նյութերի ժողովածուն (270 էջ) եւ ավ. գիտաշխատող Կ. Սահակյանի «Սուրբ Սարգիսը ժողովրդական պատկերացումներում» գիտահանրամատչելի մենագրությունը:

դ) Հայտնաբերվել են նոր հնավայրեր՝ պալեոլիթյան հուշարձան Բավրա գյուղի տարածքում, վաղբրոնզիդարյան եւ անտիկ բնակավայրեր ու դամբարանադաշտ Բագրավան գյուղի տարածքում, վաղբրոնզիդարյան բնակավայր Ամասիայի Գառնառիճ գյուղի տարածքում:

ե) Կատարվել են պեղումներ Հայկաձորի ուշուրարտական ամրոց բնակավայրի տարածքում: Հայտնաբերվել են քարից, երկաթից, ոսկորից պատրաստված աշխատանքային գործիքներ, մեծ քանակությամբ խեցեղեն:

զ) Մեծ Սեպասարի վաղբրոնզիդարյան տաճարի պեղումներով ամբողջացվել է նրա միջնադարյան շերտի մի քանի կառույցների հատակագծային պատկերը:

է) Մարզի տարածքում ազգագրական գիտարշավներով գրառվել են երգային բանահյուսության շուրջ 60, ժողովրդական աղոթքների շուրջ 20, հմայական բանաձեւերի ավելի քան 35 նմուշներ, 6 ավանդազրույցներ, ճշտվել են մի շարք տեղեկություններ Շիրակի բնակչության արդի հավատալիքների ու կրոնական վարքի, սրբատեղիների, ուխտատեղիների վերաբերյալ:

2. 2011թ. բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական եւ պատմազգագրական ուսումնասիրություններ 2» գիտական թեմայի շրջանակներում(ղեկ.՝ բան. գիտ. դոկտոր Ս.Հայրապետյան) շարունակվել են հետազոտական աշխատանքները ծրագրով նախատեսված 3 ուղղություններով՝ Շիրակի պատմագիտություն, հնագիտություն եւ բանագիտություն.

- Հաշվետու տարում կենտրոնի հնագետների կողմից իրականացվել են հետեւյալ աշխատանքները. Հունիս-հուլիս ամիսներին շարունակվել են վաղբրոնզիդարյան Մեծ Սեպասարի պեղումները, որոնցով հայտնաբերվել են նոր կառույցներ, մասնավորաբար՝ թոնիրներ, քարաշար պատերով հոր, վաղբրոնզիդարյան կառույցի պատեր եւ պահպանված կառույցի մի փոքր հատված: Այդ պեղումները եւ գտածո նյութերը հնարավորություն են տալիս ամբողջացնելու որոշ կառույցների հատակագծային պատկերը, հստակեցնելու տարժամանակյա կառույցների ժամանակաշրջանը եւ հուշարձանի շերտագրական պատկերը:

  Հոկտեմբերին պեղումներ են իրականացվել նաեւ Հայկաձորի ուշ ուրարտական ամրոց բնակավայրի տարածքում, հայտնաբերվել են 3 տնտեսական հորեր, ամրոցի պարսպի մի հատված, քարից, երկաթից, ոսկորից աշխատանքային գործիքներ եւ մեծաքանակ խեցեղեն: Կատարվում է գտածոների կամերալ մշակում:

  Միջազգային համագործակցության ոլորտում կենտրոնի հնագետների խումբը հունիսին համագործակցել է Լիոնի Արեւելքի ուսումնասիրության կենտրոնի հնագիտական արշավախմբի հետ (հնագիտական հետախուզություն Բավրա գյուղի տարածքում), հուլիս-օգոստոսին՝ Գերմանիային Հալեի համալսարանի արշավախմբի հետ (պեղումներ Ազատանում) եւ Ֆրանսիական արշավախմբի հետ (պեղումներ Երերույքի տաճարի մոտակայքում):

  Խումբը 3 գիտական հաղորդումներով մասնակցել է միջազգային 2 գիտաժողովների («Կովկասի հնագիտություն, ազգագրություն եւ բանագիտություն»,Երեւան եւ «Անի-1050», Երեւան), հրատարակել է 3 հոդվածներ արտասահմանյան ժողովածուներում եւ տպագրության է հանձնել եւս 5-ը:

- Իրականացվող ծրագրի շրջանակներում շարունակվում է մարզի ազգագրական ուսումնասիրություն տարբեր ուղղություններով: Ազգագրագետների մի խումբը՝ պ.գ.թ. Կ.Բազեյանի ղեկավարությամբ հաշվետու տարում զբաղվել է Ալեքսանդրապոլի ավանդական կենցաղային մշակույթի առանձնահատկությունների, Շիրակի բնակչության տոնածիսական վարքի, բնակավայրերում գործող սրբատեղիների, ուխտագնացության ձեւերի,

դրանց ուղեկցող այլ երեւույթների ուսումնասիրությամբ, նաեւ շարունակում է քննել մարզի տարածքում 20-50-ական թթ. կատարված էթնոժողովրդագրական գործընթացները, մասնավորապես դեպի արդյունաբերական Լենինական գյուղական բնակչության տեղաշարժի պատճառները եւ հետեւանքները: Վերոնշյալ հարցերի շուրջ խումբը հավետու տարում զեկուցումներով մասնակցել է միջազգային 2 եւ հանրապետական 3 գիտաժողովների, հրատարակել է 1, հանձնել տպագրության 9 աշխատանք(մեկը՝ արտերկրում):

- Ազգագրագետների երկրորդ խումբը հ.գ.թ. Կարինե Սահակյանի ղեկավարությամբ 2011-ին շարունակել է աղետի բանահյուսության՝ որպես ստրեսների կամ ճգնաժամերի պահին անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմի առանձնահատկությունների քննությունը՝ այդ նպատակով բանահավաքչական աշխատանքներ իրականացնելով մարզի մի շարք բնակավայրերում: Բազմաժանր ազգաբանական եւ բանահյուսական նյութերի հիման վրա խումբը շարունակել է աշխատանքը «Շիրակի ազգագրություն եւ բանաձեւային բանահյուսություն» աշխատությունը հրատարակության նախապատրաստելու ուղղությամբ: Հաշվետու տարում խումբը 4 զեկուցումներով մասնակցել է 1 միջազգային եւ 3 հանրապետական գիտաժողովների, նաեւ տպագրության հանձնել 1 հոդված:
- Ազգագրագետների երրորդ խումբը արվ.գ.թ. Հասմիկ Հարությունյանի ղեկավարությամբ 2011-ին շարունակել է Շիրակի ավանդական երաժշտական ժառանգության, մասնավորաբար պարեղանակների ու խաղիկների ուսումնասիրությունը: Գիտարշավների միջոցով հավաքվել եւ մշակվում են դրանց շուրջ 30 նոր նմուշներ: Ավարտվել են կենտրոնի վաղամեռիկ գիտաշխատող Հ.Ափինյանի կազմած «Շիրակի ժողովրդական երգեր» ազգագրական նյութերի ժողովածուի հրատարակման նախապատրաստական աշխատանքները: Միջազգային համագործակցության շրջանակներում Հաագայի Պատմական արդարության ու հանդուրժողականության ինստիտուտի հետ խումբը հաշվետու տարում սկսել է աշխատանքը «Կարս-Ալեքսանդրապոլ. Աշուղական ավանդույթներ» թեմայի շուրջ եւ հունիս-հուլիս ամիսներին երկու անգամ մասնակցել Կարսում կազմակերպված բանահավաքչական հայ-թուրքական արշավախմբի աշխատանքներին:

Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերայի 100-ամյակի առիթով կոմպոզիտորի անձնական ֆոնդի նյութերի հիման վրա կենտրոնում սկսվել է «Անուշի» 1912թ. Ալեքսանդրապոլում բեմադրված բնօրինակ տարբերակի վերականգնման եւ պարտիտուրի հրատարակման նախապատրաստական աշխատանքները: Խումբը մասնակցել է 3 միջազգային եւ 1 հանրապետական գիտաժողովների, տպագրել է 4, հանձնել հրատարակման 5 հոդված:

- Իրականացվող թեմայի շրջանակներում 2011-ին կենտրոնում շարունակվել է պատմական գավառի նորագույն շրջանի պատմության մի քանի հարցերի ուսումնասիրությունը, մասնավորաբար, դարասկզբին գավառի էթնոժողովրդագրական իրադրության հնարավորինս ամբողջական պատկերի բացահայտումը, այնտեղ ապաստանած արեւմտահայ հոծ գաղթականության ծանրագույն վիճակի ու նրա տարաբնույթ հիմնախնդիրների լուսաբանումը, 19-րդ դարավերջին Ալեքսանդրապոլի հասարակական ու կրթամշակութային կյանքի նոր էջերի ուսումնասիրությունը (խմբի ղեկավար՝ պ.գ.թ. Ա.Հայրապետյան): Տպագրվել է «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում /19-րդ դ.-200-րդ դ. սկիզբ/» փաստաթղթերի ժողովածուն /«Գիտություն» հրատ., 270 էջ/, պատրաստվել է հրատարակման «Արեւմտահայ գաղթականությունն Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ.» փաստաթղթերի ժողովածուն: 2011-ին Թբիլիսիում Վրաստանի պետական արխիվի մի շարք ֆոնդերի ուսումնասիրությամբ շարունակվել է նաեւ Անիի ու Տայքի Բագրատունիների փոխհարաբերությունների եւ այդ գավառների վարչաժողովրդագրական հիմնախնդիրների քննությունը: Խումբը զեկուցումներով մասնակցել է 4 հանրապետական գիտաժողովների, տպագրել մեկ մենագրություն, 3 հոդված, հանձնել հրատարակման 10 հոդվածներ:
- Հաշվետու տարում սկիզբ է առել նոր թեմա՝«Քաղաքային խոսվածք. Գյումրու արդի լեզվավիճակի ուսումնասիրության հարցեր»:
- Կենտրոնում 2011թ. շարունակվել է Շիրակի պատմության հնագույն շրջանի հիմնախնդիրներին վերաբերող «Ախուրյանի ավազանը մ.թ.ա. 1-ին հազարամյակում» թեման, որ նպատակ է հետապնդում գիտականորեն լուսաբանել ավազանի երկրների բնակչության էթնիկ կազմի, առասպելական պատկերացումների ու պաշտամունքի մի շարք հարցեր: Մասնավորապես ճշգրտվել են Իշկիգուլու եւ Գուլութախի երկրների անունների ստուգաբանությունը՝ որպես պաշտամունքային բնույթի տեղանունների,որոնք ունեն հնդեվրոպական ծագում եւ զուգահեռներ շումերական դիցանուններում: Կատարվել է «Անի» տեղանվան նոր ստուգաբանություն՝ որպես հնդեվրոպական ծագմամբ հայերեն «հանի»՝ մեծ մայր բառի տարբերակ, Երվանդունյաց երկրորդ դարաշրջանի Անին դիտարկվել է իբրեւ Մայր դիցուհու պաշտամունքի կենտրոն, առաջադրվել է Անի եւ Երվանդավան բնակավայրերի նույնության, Անիի՝ որպես Անի-Մաղազբերդ-Երերույք եռյակի պաշտամունքային անդամ լինելու գիտական նոր վարկածներ: Այս եւ այլ հարցերի վերաբերյալ հաշվետու տարում խումբը /ղեկավար՝ պ.գ.դ. Ս.Պետրոսյան/

զեկույցներով հանդես է եկել 2 միջազգային եւ 2 հանրապետական գիտաժողովներում, տպագրել է երեք հոդված, հրատարակման հանձնել եւս 4-ը:

4. ___

5. 2011թ. հրապարակումների ցանկը

Մենագրություններ

1. Հայրապետյան Ա. Ս., «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (19-րդ դ. – 20-րդ դ. սկիզբ)» փաստաթղթերի եւ նյութերի ժողոված / ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,2011, 270 էջ:
2. Սահակյան Կ., «Սուրբ Սարգիսը ժողովրդական պատկերացումներում»/ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 144 էջ :

Հոդվածներ

1. Աթանեսյան Լ. Գորգը հայ նկարիչների ստեղծագործություններում, Հայկական գորգագործական մշակույթը" հանրապետական առաջին գիտաժողով, 18-19 նոյեմբերի 2011, Երևան, էջ 5-8:
2. Ալեքսանյան Կ., Փաստաթղթեր 1918 թվականի մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ձևավորման վերաբերյալ/Փաստաթղթերի հավաքածու, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2011, թիվ 1, էջ 12-24:
3. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության ստեղծումը (1918 թվականի մայիս) / ԳՊՄԻ գիտաժողով, նվիրված Հայաստանի անկախության 20-ամյակին, Գյումրի, էջ 125-127:
4. Ալեքսանյան Կ.Վ., Ղալաչյան Մ.Վ., Ուսուցիչը կրթական բարեփոխումների կիզակետում / ԳՊՄԻ գիտաժողով, նվիրված Հայաստանի անկախության 20-ամյակին, Գյումրի, 2011, էջ 281-283:
5. Բազեյան Կ., Հայկական ասեղնագործ գորգերը /"Հայկական գորգագործական մշակույթը" հանրապետական առաջին գիտաժողով, նոյեմբեր 18-19, 2011, Երևան, էջ 25-31:
6. Բազեյան Կ., Հր. Աճառյանի բառարանները որպես հայկական արհեստների ուսումնասիրության աղբյուր/ ԳՊՄԻ Հանրապետական գիտաժողով նվիրված Հր. Աճառյանի ծննդյան 135 ամյակին, մայիս 5-6, 2011, Գյումրի, էջ 72-81:

7. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը XIXդ. առաջին կեսի Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացների համատեքստում/ «Պատմա-բանասիրական հանդես», հ. 2, Եր., 2011, էջ 192-199:
8. Հայրապետյան Ս. Գրաբարի բնության խնդրի դիրքային բաշխման շուրջ/ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանին նյութեր նվիրված Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին, մայիս 5-6, 2011, Գյումրի, էջ 175-192:
9. Հայրապետյան Ս. Շիրակի հայագիտականը/Լեզվաշխարհ, թիվ 4, Երեւան, 2011, էջ 31-35:
10. Պետրոսյան Ս., Արարատյան լեռների հին անունների մասին, ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանին նյութեր նվիրված Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին, մայիս 5-6, 2011, Գյումրի, էջ 3-11
11. Պետրոսյան Ս., Թեշուբի հայկական մակդիրները գահանուններում/ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանին նյութեր նվիրված Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին, մայիս 5-6, 2011, Գյումրի, էջ 12-22:
12. Պետրոսյան Ս., Տիգրան Մեծի որդիները եռադասության տեսանկյունից /Տիգրան Մեծի գահակալության 2100–ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 28-35:
13. Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ., Հեքիաթի թռչող գորգը (էթնոհոգեբանական ուսումնասիրություն), «Հայկական գորգագործական մշակույթ» հանրապետական գիտական առաջին նստաշրջան, Երևան, նոյեմբերի 18-19, 2011, էջ 87-92:
14. Арутуныан А. Развитие армянской национальной монодии в духовной культуре средневекогого Ани/ The fundamentals of our Spirituality միջազգային գիտաժողովի նյութեր, Բաթումի, 2011, էջ 188-191:
15. Базеян К., Армянская церковная вышивка, The fundamentals of our Spirituality միջազգային գիտաժողովի նյութեր, Բաթումի, 2011, էջ 142-145:
16. Yeganyan L., Xhachatryan H., Schunke T. Ein steiniges Tal-ratselhafte Steinstrukturen im Achotsk-Tal bei Hartashen, Provinz Schirak/ Archaologie in Armenien ժողովածու, Հալլե, 2011, էջ 73-105:

Հանձնված է հրատարակման

1. Աթանեսյան Լ. Հայ կերպարվեստը XVII-XVIIIդդ./ ԳՊՄԻ միջազգային գիտաժողովի նյութեր , 28-29 նոյեմբերի 2011, Գյումրի (0.5 մամուլ):

2. Աթանեսյան Լ. Վալերի Խաչատրյանի ստեղծագործական աշխարհը / ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի “Գիտական աշխատություններ”, հ. 14, Գյումրի, 2011 /0,5 մամուլ/:
3. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի գավառը 1920 թվականի թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, Հայագիտական հանդես, հ. 32, Բեյրութ, 2012 (1.5 ամամուլ):
4. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականության դրությունը 1919-1920թթ., /Փաստաթղթերի հավաքածու// Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2, Երևան, 2011 (1 մամուլ):
5. Ալեքսանյան Կ., Հայաստանի առաջին հանրապետությունում հայերենը պետական լեզու հռչակելու հարցի շուրջ, Գիտական աշխատություններ, հ. 14, Գյումրի, 2011 (0.7) մամուլ):
6. Ակոպով Ա., Օլթիի օկրուգի վարչաժողովրդագրական նկարագիրը 1878-1897 թթ./ ՀՀ ԳԱԱ ՊԻ <<Հայոց պատմության հարցեր>> գիտական հոդվածների ժողովածու, հ. 12, Երևան, 2011 (0.5 մամուլ):
7. Ակոպով Ա., Դավիթ կյուրապաղատի ժառանգության հարցը 11-րդ դ. 1-ին քառորդին/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 14, Գյումրի, 2011 (0.6 մամուլ):
8. Ակոպով Ա., Նորահայտ վավերագրեր Ախուրյանի ավազանի բնակավայրերի վերաբերյալ (1885-1913)/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 14, Գյումրի, 2011 (0.6 ամաուլ):
9. Այվազյան Գ., «Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցը 1860 - 1880 - ական թթ.»/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 14, Գյումրի, 2011 (0.5 ամաուլ):
10. Այվազյան Գ.,««Մշակ»-ը 1870-1880- ական թթ. Ալեքսանդրապոլի մասին» / ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ <<Գիտական աշխատություններ>>, հ. 14, Գյումրի, 2011 (0.6 մամուլ):
11. Բազեյան Կ., Անիի ասեղնագործության ու նրա ժառանգորդման շուրջ/ Անիի մայրաքաղաք հռչակվելու 1050-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան 2011 (0.8 մամուլ):
12. Բազեյան Կ., Ուխտագնացության երևույթը Շիրակի բնակչության ծիսական կյանքում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի “Գիտական աշխատություններ”, հ. 14, Գյումրի (0.4 մամուլ):
13. Բազեյան Կ., Աղանյան Գ., Ալեքսանդրապոլ. ազգագրական ուրվագիծ (8 մամուլ):
14. Բոյաջյան Ա., Հարավային Կովկասի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները 20-րդ դարում և 21-րդ դարասկզբին, Կովկասագիտական միջազգային գիտաժողով, Երևան, 2011 (0.5 մամուլ):

15. Բոյաջյան Ա., Էթնոժողովրդագրությունը գիտությունների համնակարգում/ԳՊՄԻ գիտաժողով՝ նվիրված Անկախության 20-ամյակին, նոյեմբեր 28-29, 2011, Գյումրի (0.5 մամուլ):
16. Բոյաջյան Ա., Լենինականի շրջանի բնակչության թվի շարժընթացի առանձնահատկությունները 1920-1950-ական թթ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի "Գիտական աշխատություններ", հ. 14, Գյումրի, 2011 (0.4 մամուլ) :
17. Լ. Եգանյան, Մեծ Սեպասարի խեցեղենը (գույն, ձև, նախշազարդում), ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի "Գիտական աշխատություններ", հ. 14, Գյումրի, 2011 (0.8 մամուլ):
18. Լ. Եգանյան, Հ. Խաչատրյան, Լուսաղբյուրի նորահայտ անտիկ դամբարանադաշտը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի "Գիտական աշխատություններ", հ. 14, Գյումրի, 2011 (0.7 մամուլ):
19. Լ. Եգանյան, (համահեղինակ Ռ. Կրասար) Le haut plateau de Djavakheti (nord-ouest de l'Armenie , (Լիոն, Ֆրանսիա) :
20. Հ. Խաչատրյան, Լ Պետրոսյան, Լ. Եգանյան, Հայկաձորի ուշ ուրարտական ամրոց-բնակավայրի 2011թ. պեղումները, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի "Գիտական աշխատություններ", հ. 14, Գյումրի, 2011 (0.5 մաուլ) :
21. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի գավառը XIXդ. առաջին կեսի Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական գործընթացների համատեքստում / ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 14, Գյումրի, 2011 (0.8 մամուլ):
22. Հայրապետյան Ս., Գրիգոր Մագիստրոսը եւ Անիի երաժշտական մշակույթը / «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն» միջազգային գիտաժողովի նյութեր, Երեւան, 2011, նոյեմբերի 15-17 /0,7 մամուլ/:
23. Հայրապետյան Ս., Գյումրու արդի լեզվավիճակի բնորոշիչները / Անկախության 20-ամյակին նվիրված ԳՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, նոյեմբեր 28-29, 2011, Գյումրի (0.6 մամուլ):
24. Հարությունյան Հ., Դիտարկումներ հայ աշուղական արվեստի ազգային բնորոշիչների շուրջ/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի "Գիտական աշխատություններ", հ. 14, Գյումրի, 2011/0,5 մամուլ/:
25. Հարությունյան Հ., Էդվարդ Միրզոյանի կամերային ստեղծագործությունների դերը հայ կամերային- գործիքային երաժշտության մեջ / "Մշակույթների երկխոսություն. համաշխարհային մշակույթը եւ Հայաստանը" միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2011/0,7 մամուլ/:

26. Հարությունյան Հ., Տաղ ժանրի ծաղկումը Անիի քաղաքային մշակույթում / “Քրիստոնեական մշակույթի խնդիրներ” միջազգային գիտաժողովի նյութեր, Բաթում, 28-29 ապրիլի, 2011 /0,6 մամուլ/:
27. Հարությունյան Հ., Գրիգոր Մագիստրոսը եւ Անիի երաժշտական մշակույթը / «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն» միջազգային գիտաժողովի նյութեր, Երեւան, 2011, նոյեմբերի 15-17 /0,5 մամուլ/:
28. Հարությունյան Հ., Ալ.Սպենդիարյանը եւ հայ աշուղական արվեստը / Ալ. Սպենդիարյանի 140-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութեր, Երեւան, 2011, 30 նոյեմբերի/ 0,6 մամուլ/:
29. Հարությունյան Հ., Արշակ Բրուտյան/ “Արվեստ եւ ժամանակ. հայացք Գյումրուց”, Գյումրի, 2011, թ.1/0,7 մամուլ/:
30. Հարությունյան Հ., Գրիգոր Մագիստրոսը եւ Անիի երաժշտական մշակույթը /«Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն» միջազգային գիտաժողով զեկուցումների հիմնադրույթներ, Երեւան, 2011, նոյեմբերի 15-17 (0.7 մամուլ):
31. Պետրոսյան Ս., Հայ շումերական առասպելաբանական աղերսների շուրջ / ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի “Գիտական աշխատություններ”, հ. 14, Գյումրի, 2011 (0,9 մամուլ):
32. Պետրոսյան Ս., Մովսես Խորենացին Հայաստանում սեպագրության հայտնվելու ժամանակաշրջանի մասին /ՎՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Վանաձոր, 2011 (0.7 մամուլ) :
33. Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Անին եւ Երվանդունիները/ԳԱԱ ՊԻ «Հայաստանի քաղաքակրթական ավանդը Մետաքսի ճանապարհի պատմության մեջ» միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի, 2011, Եր. (0.7 մամուլ):
34. Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Անիի դերը Երվանդունյաց նոր թագավորությունում/ ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի “Գիտական աշխատություններ”, հ. 14, Գյումրի, 2011 (0,8 մամուլ):
35. Սահակյան Կ., Անին շեն աշխարհն ավեր, Աշխարհը շեն Անին ավեր, «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն» միջազգային գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2011, նոյեմբերի 15-17 (0.7 մամուլ) :
36. Սահակյան Կ., Խոսքի, բառի և ձայնի հոգելեզվաբանական բնութագիրը, ԳՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Գյումրի, նոյեմբերի 28-29, 2011 (0.8 մամուլ):

37. Базеян К., Некоторые формы организации общественного досуга населения города Александрополя / Археология, этнография и фольклористика Кавказа, Международная научная конференция, Ерева 2011.

38. □□□□□□ □. Памятник раннебронзового периода Мец Сепасар в контексте индоевропейских верований и ритуалов,/ Российская Академия наук, Институт этнологии и антропологии имени Миклухо-Маклая, Труды Маргианской археологической экспедиции, Москва.

6. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ,

տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Արտուշի Հայրապետյան,

գիտքարտուղար՝ արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյան

հեռ. (0312) 6 94 77

էլ. հասցեն. hkentron@mail.ru

7. Տվյալներ կադրերի վերաբերյալ

ա) ___

բ) ___

գ) 4, 11, 2

8. ___

9. ___

10. ՇՇՀ կենտրոնը հաշվետու տարում համագործակցել է ԵՊՀ, ՀՊՄՀ, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի, ԳՊՄԻ հետ, համատեղողների թվաքանակը 8 :

11. __

Գիտքարտուղար՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տնօրեն՝ Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

__Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2011թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Կազմակերպությունը	Թեմաների կամ պայմանագրերի թիվը (n) և ֆինանսավորման ծավալը (X հազ.դր.)		
		Բազային	Թեմատիկ	Տնտ. Պայմանագրեր
1	2	3	4	5
1	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	1 22.624.800դր.		

Աղյուսակ 3

Կազմակերպության անցկացրած հանրապետական և միջազգային միջոցառումները

N	Միջոցառումներ	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	Այդ թվում արտ. Երկրից
1	2	3	4	5
1	Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված Հր. Աճառյանի ծննդյան 135-ամյակին	Գյումրի, 5-6 մայիսի, ԳՊՄԻ հետ համատեղ	23	-
2	Անիի՝ Հայոց Բագրատունիների մայրաքաղաք հռչակման 1050-ամյակին նվիրված գիտական ընթերցումներ	ՇՀՀ կենտրոն, սեպտեմբեր 12, Անիի Մայր տաճար	7	-

----Աղյուսակ 4

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ կազմակերպություններում

N	Կազմակերպությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների քանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու	Համատեղ գիտական աշխատանք կատարելու	Բանակցությունների և խորհրդածությունների համար
1	2	3	4	5	6
1	ՇՀՀ կենտրոն	Ֆրանսիա, Գերմանիա, Վրաստան Իտալիա		2 3 1 2	2 1 1 1

___Աղյուսակ 6

Աղյուսակ 7

Կազմակերպության 2011թ. Ֆինասավորման ծավալները

N	Կազմակերպությունը	Բյուջե	Արտաբյուջե	Դրամաշնորհներ		
				արտառժույթ ($,€, руб.)	Արժույթի կուրսը	Դրամ
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	22.264.200				

Աղյուսակ 8

ԳԱԱ գիտաշխատողների 2011թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Կազմակերպությունը	Մենագրություն, ժողովածու		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք		Հոդվածներ, զեկուցումներ		Թեզիսներ	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4		5			6	7
	ՇՀՀ կենտրոն	2				27	5	11	2

Աղյուսակ 9

Ասպիրանտների թվաքանակը

Կազմակերպությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 01.01.2011թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն		1		

___Աղյուսակ 10

Աղյուսակ 11

Աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներն առ 01.01.2012թ.

N	Կազմակերպությունը	Աշխատողների ընդհանուր թիվը	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը	ԳԱԱ ակադեմի կոսներ	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ	Գիտության դոկտորներ	Գիտության թեկնածուներ
1	2	3	4	5	6	7	
	ՇՀՀ կենտրոն	22	17			2	10

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ **Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**